



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեղմելով կամ օգտագործել անկա նյութը՝ անդձնելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԿԱՆՈՆԱԳԻՐ


ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԱԿԻՆ

Մոլ
838



1921



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊՈԼՍՈՅ ՇՐՋԱՆԱԿԻՆ

Յօդուած 1.—Ազատական Կուսակցութեան կրնայ անդամակցիլ տասնըութը տարեկանէն վեր ամէն հայ անհատ, առանց սեռի խտրութեան:

Յօդ. 2.—Կուսակցութեան անդամակցող ամէն անհատ պարտաւոր է հաւատարիմ մնալ Կուսակցութեան սկզբունքներուն, ծրագրին և կազմական կանոնագրի տրամադրութիւններուն:

Յօդ. 3.—Անդամագրուողին յարմարութեան կը վկայեն երկու անդամներ:

Յօդ. 4.—Տասը անդամներու գրաւոր առարկութեան վրայ, առանց վիճաբանութեան, կը մերժուի անդամագրութեան դիմում մը:

Յօդ. 5.—Ուրիշ Կուսակցութիւններէ հեռացուած և հանրային դործերու մէջ ամբաստանուած կամ դատապարտուած թեկնածուներու դիմումը կը քննուի երեքէն հինգ հոգիներու յանձնախումբի մը կողմէ, որուն ներկայացուցած տեղեկագրին վրայ ժողովը մեծամասնութեամբ կ'որոշէ ընդունիլ կամ մերժել դիմումը:

ԱՆԴԱՄԱՏՈՒՐՔ

Յօդ. 6.—Ամէն մէկ անդամ պարտաւոր է ամսական քսանընկնգ դահեկան անդամատուրք մը վճարել:

Անդամատուրքի այդ քանակը նուազագոյնն է և պարտաւորիչ, իսկ ռոկէ աւելին կամաւոր:

Երբ ռնհատ մը ամէն յարմարութիւն քանի կուսակցութեան անդամակցելու համար և կը փափաքի

անդամակցիլ, բայց կը հաստատուի թէ նիւթապէս անկարող է որոշեալ տուրքը վճարելու, իր դիմումը կ'ընդունուի:

Յօդ. 8.—Անդամատուրքի գանձումը կը կատարուի ամսէ ամիս կանոնաւորապէս:

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ Ե Ր

Յօդ. 9.—Նուազագոյնը հինգ անդամով կը կազմուի Ազատական Մասնաճիւղ մը:

Յօդ. 10.—Կրները կրնան ունենալ ի հարկին իրենց առանձին մասնաճիւղերը, այրերու մասնաճիւղերուն հաւասար իրաւասութիւններով:

Յօդ. 11.—Մասնաճիւղեր իրենց վարչութիւններուն միջոցով կը յարաբերին նահանգային Վարչութեան հետ:

ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 12.—Իւրաքանչիւր մասնաճիւղ երկու շաբաթ անգամ մը կ'ունենայ կանոնաւոր անդամական ժողով, որուն պարտաւոր է ներկայ գտնուիլ ամէն մէկ անգամ:

Յօդ. 13.—Մասնաճիւղի մը վարչութիւնը եթէ պէտք տեսնէ կրնայ աւելի յաճախ գումարել անդամական ժողովներ:

Յօդ. 14.—Անդամաժողովներու մէջ նկատի կ'առնուին նահանգային Վարչութեան ստացուած հրահանգները և էլ մտածուին միջոցներ մասնաճիւղը զօրացնելու եւ անոր գործունէութիւնը ընդարձակելու համար:

Յօդ. 15.—Անդամաժողով մը օրինական կը նկատուի, երբ անդամներու կէսէն մէկ աւելի ներկայութիւն կայ:

Անյետաձգելի խնդիրներ նկատի առնուելու պարագային, երբ մեծամասնութիւն չի գոյանար, երկրորդ

ազդարարութեան ներկաներուն թիւը և տրուած որոշումը կը նկատուին օրինաւոր :

ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

Յօդ. 16. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ ունի իր վարչութիւնը հինգէն եօթը հոգիէ բաղկացած :

Յօդ. 17. — Վարչութիւնը կ'ընտրուի անդամական ժողովին մէջ, գաղանի քուէով, և իր պաշտօնը կը տեւէ վեց ամիս :

Յօդ. 18. — Վարչութեան պաշտօնն է գործադրել կանոնադրի տրամադրութիւնները և ապահովել նահանգային վարչութեանն ստացուած հրահանգներուն գործադրութիւնը :

Մասնաճիւղերու վարչութեանց բոլոր անդամները անհատաբար և հաւաք սրբար պատասխանատու են տեղական գործառնութեանց և հաշիւներուն համար :

Յօդ. 19. — Վարչութիւնը իր գործունէութեան համար համարատու է մասնաճիւղի անդամական ժողովին, ինչպէս նաեւ նահանգային վարչութեան :

Յօդ. 20. — Վարչութեան ղիւանը կը կազմուի հետեւեալ կերպով .

Ատենապետ, ատենադպիր, զանձապահ, և խորհրդականներ, որոնք փոխանորդաբար կը վարեն ատենապետի և ատենադպրի պաշտօնը, բացակայութեան ատեն :

Յօդ. 21. — Ատենապետն պաշտօնը հետեւեալն է .

Վարչային և մասնաճիւղերու ժողովները վարել :

Ատենադպիրին հետ ստորագրել պաշտօնական գրութիւններուն տակ :

Հսկել որ վարչութեան ամէն մէկ անդամը իր պարտականութիւնը կատարէ անթերի կերպով :

Կնիքը կը մնայ ատենապետին քով :

Յօդ. 22.— Ասեմադպիւրին պաշտօնը հետեւեալն է.
Վարչութեան և անդամական ժողովներուն արձա-
նադրութիւնները պահել :

Նամակները գրել և ատենապետին հետ ստորագրել .

Յօդ. 23.— Գանձապահին պաշտօնն է .

Մասնաճիւղին վերաբերած դրամները ստանալ և
պահել :

Հաշուետոմարին մէջ արձանագրել մասնաճիւղին
ելեմնւոքը :

Ատենապետին և ատենադպրին ստորագրած արտօ-
նագրերու վրայ միայն վճարումները ընել :

Անդամատուրքերը գանձել և անոնց ընկալագրե-
րուն տակ ստորագրել :

Յօդ. 24.— Մասնաճիւղերու վարչութիւնները իրենց դի-
ւանական անխուսափելի պէտքերէն դատ . ունէ ուրիշ պէտ-
քերու դրամ չենկրնար տրամադրել, առանց նախապէս
Նահանգային Վարչութեանը հաւանութիւնը ստանալու :

Յօդ. 25.— Մասնաճիւղերու վարչութիւնները նախորդ
յօդուածի տրամադրութեան՝ համաձայն իրենց ծախքերը
ընելէ վերջը, իրենց մօտ գոյացած գումարներուն 75%⁰ը
պարտաւոր են ղրկել Նահանգային վարչութեան :

Յօդ. 26. Բոլոր մասնաճիւղերու վարչութիւնները պար-
տաւոր են իրենց հաշուեկշիռները ամէն ամսոյ լրանալուն
դրաւոր ներկայացնել Նահանգային Վարչութեան :

Յօդ. 27.— Մասնաճիւղի վարչութիւնէն եթէ հրա-
ժարում տեղի ունենայ, վարչութիւնը կ'ամբողջացնէ իր
կազմը նոր անդամներու յաւելումով, մինչեւ որ օրի-
նական չրջանը լրանայ և վարչական ժամողջ կազմին
համար նոր քնտրութիւն կատարուի :

Յօդ. 28.— Հրաժարողները եթէ մեծամասնութիւն
ըլլան, վարչութեան չրջանը կ'անխաճասօրէն վերջացած

կը նկատուի և կ'ընտրուի նոր վարչութիւնը, Պեց ամսուան համար:

Յօդ. 29.— Վարչութեան անդամները վերընտրելի են:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 30.— Նահանգային Վարչութիւնը Պոլսոյ շրջանի ղեկավար մարմինն է որ շրջանակին վերաբերեալ բոլոր գործերը կը վարէ և այդ բոլոր գործերուն համար անհրաժեշտ յարաբերութիւնները կը կատարէ Կեդրոնական Վարչութեան հետ:

Յօդ. 31.— Նահանգային Վարչութիւնը Պոլսոյ շրջանակի պատգամաւորական ժողովէն կը ընտրուի և իր պաշտօնը կը տեսէ մէկ տարի:

Յօդ. 32.— Նահանգային Վարչութեան պաշտօնն է հոգ տանիլ մասնաճիւղերու գործունէութեան, աշխատիլ նոր մասնաճիւղերու կազմութեան և փրփակականութիւնաւոր միջոցներով ընդարձակել կուսակցութեան ազդեցութիւնը Պոլսոյ շրջանին մէջ:

Յօդ. 33.— Նահանգային Վարչութեան անդամները հաւաքաբար և անհատաբար պատասխանատու են վարչային գործունէութիւններուն ու քայլերուն համար:

Յօդ. 34.— Վարչութիւնը 5-7 անդամներէ կը բաղեանայ, պաշտօնի հետեւեալ բաժանումով.

Ատենապետ, ատենադպիր, գանձապահ, փոխ ատենապետ, փոխ ատենադպիր և խորհրդական:

Յօդ. 35.— Ատենապետին պաշտօնն է.

Վարել վարչային ժողովները:

Ստորագրել բոլոր պաշտօնաթղթերուն և գանձապահին ուղղուած վճարումի արտօնագրին տակ:

Հսկել վարչային պարտաւորութիւններուն սնթերի կատարման վրայ:

Կնիքը կը մնայ Վարչութեան Ատենապետին քով:

Յօդ. 36.— Ատենադպրին պաշտօնն է պատրաստել բոլոր դրութիւնները և ատենապետին հետ ստորագրել զանոնք, վարչային նիստերուն արձանագրութիւններն ընել, և Գանձապահին ուղղուած վճախումի արտօնագրերուն տակ ստորագրել:

Յօդ. 37.— Գանձապահին պաշտօնն է՝ անդամատուրքերը դանձել ստացագրերուն տակ ստորագրելով, կանոնաւոր արձանագրութիւնը ընել ելեմուտքին պահել ելքի բոլոր արդարացուցիչ թուղթերը:

Ատենապետին և ատենադպրին ստորագրութիւնները կրող արտօնագրի մը վրայ միայն դրամ վճարել:

Յօդ. 38.— Նահանգային Վարչութեան անդամ մը պէտք է երկու տարի կանոնաւորապէս ու անընդհատ անդամակցած ըլլայ կուսակցութեան:

Յօդ. 39.— Նահանգային Վարչութիւնը կ'ընտրէ հրաժարած անդամներուն յաջորդը, երբ հրաժարողները փոքրամասնութիւն են: Եթէ մասնակի հրաժարումներու հետեւանքով վարչութեան նախկին կազմը իր մեծամասնութիւնը կորսնցնէ, լուծեալ կը նկատուի Վարչութիւնը, առանց նկատի առնելու նոր անդամներով ամբողջացած ըլլալու պարագան:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 40.— Շրջանային Պատգմ. կանոնաւոր ժողովը Նահանգային Վարչութեան հրաւերովը կը գումարուի տարին մէկ անգամ, զիսաւոր օրակարգ ունենալով Վարչութեան համարատուութիւնը և նոր վարչութեան ընտրութիւնը:

Յօդ. 41.— Մասնահիւղերը Շրջանակային Պատգմ. ժողովին կը մասնակցին հետեւեալ համեմատութեամբ.

Հինգէն տար մէկ պատգամաւոր և յետոյ իւրաքանչիւր տասնի համար մէկ պատգամաւոր աւելի:

Յօդ. 42.—Յարկեցուցիչ պարագաներու տակ Նահանգային վարչութիւնը երբ պէտք տեսնէ կրնայ շրջանակը արտակարգ Պատգամ, Ժողովի հրահրել :

Նահանգային և արտակարգ Պատգամ, Ժողով կը գումարուի հետեւեալ պարագաներու մէջ .

1⁰ երբ Նահանգային վարչութիւնը անհրաժեշտ կը նկատէ :

2⁰ երբ շրջանակի մասնաճիւղերուն մեծամասնութիւնը գրաւոր պահանջ կը ներկայացնէ :

3⁰ Բացի այս երկու պարագաներէն, երբ Նահանգ վարչութիւնը իր օրինական մեծամասնութիւնը կը կորսնցընէ, պարտաւոր է արտակարգ Նահանգ, Պատգամ, Ժողով գումարել :

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 43.—Ամէն մէկ անդամ պարտաւոր է իր անդամատուրքը վճարել :

Յօդ. 44.—Ու և է ընկեր որ մասնաճիւղէ մը կը հեռանայ և կը հաստատուի ուրիշ վայր, պէտք է իր պատկանած մասնաճիւղէն յանձնարարական տունէ, որպէսզի կարենայ տեղւոյն մասնաճիւղին անդամակցիլ : Այսպիսի տեղափոխութիւններու պարագային մասնաճիւղերու վարչութիւնները պարտաւոր են Նահանգային վարչութեան տեղեկագրել :

Յօդ. 45.—Երեք ամիս իրարու վրայ իր տուրքը չվճարող անդամ մը գրաւոր աղդարարութիւն կ'ըստանայ : Աղդարարութենէն ետք երբ մէկ ամիս ալ նոյն ընկերը շարունակէ անպարտաճանաչութիւնը անդամակցութենէ հրաժարած կը նկատուի, անդամական Ժողովին որոշումով :

Բացառութիւն են այն անդամները, որոնց նիւթա-
կան վիճակը նկատի առնելով վարչութիւնը հաւանած
է որ որոշ աստեղի մը համար տուրք չվճարէ:


Յօդ. 46. — Ամէն մէկ անգամ պարտադրուած է
ներկայ գտնուիլ անդամական ժողովին:

Յօդ. 48. — Առանց բանաւոր և գրաւոր պատճառի բա-
ցակայ անդամ մը գրաւոր ազդարարութիւն և՛ ստանայ:

Գրաւոր ազդարարութիւնը ստանալէն վերջը, միև-
նոյն անգամը եթէ յամառի երեք յաջորդական նիստերու
ալ բացակայիլ կուսակցութենէն հեռացած կը նկատուի:

Յօդ. 48. — Կուսակցական ունէ զեղծում և կամ
նմանօրինակ արարքներ գործող ընկեր մը, իրեն գոր-
ծած յանցանքին համեմատ կը կախակայուի կամ կ'ար-
տաքսուի և կամ ձեռնահաս մարմնին կողմէն որոշուած
պատիժի մը կ'ենթարկուի:

Յօդ. 49. — Մասնաճիւղերու վարչութեանց կողմէ
ամբաստանեալ կամ կախակայեալ ընկեր մը, իրաւունք
ունի վերաքննութեան համար գրաւոր դիմելու նահան-
գային Վարչութեան, եթէ զոհացում չստանայ, կրնայ
դիմել նաեւ Կեդր. Վարչութեան և ի հարկին ընդհանր
Ընդհ. Պատգամաւորական ժողովին: Այս վերջինին իր
Փերագոյն Ատեան տուած վճիռը վերջնական ու ան-
վերաքննելի է:



ԳՍՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0319265

227
834